ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

ք.Երևան «23» 04 2014թ. № 389-Ա

«ՍՏԱՆԴԱՐՏ ԴԻԱԼՈԳ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՄԻ ՇԱՐՔ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԵՐԻ ՊԱՀԱՆՋՆԵՐԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՄԱՐՄԻՆ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ԵՎ ՆՇԱՆԱԿՈՒՄԸ ՄԵՐԺԵԼՈՒ, ՀՀ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 24-Ի ԹԻՎ 256-Ա ՀՐԱՄԱՆՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. «Ստանդարտ Դիալոգ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը նշանակել որպես տեխնիկական կանոնակարգերի պահանջներին համապատասխանության գնահատման գործունեություն իրականացնող մարմին՝ 3 տարի ժամկետով և այն արտադրանքի տեսակների համար, որոնց վրա տարածվում են հետևյալ տեխնիկական կանոնակարգերը՝

1) ՀՀ կառավարության 2006 թվականի հոկտեմբերի 19-ի «Մսի և մսամթերքի տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» N 1560-Ն որոշում

2) ՀՀ կառավարության 2007 թվականի հունվարի 11-ի «Հացահատիկին, դրա արտադրմանը, պահպանմանը, վերամշակմանը և օգտահանմանը ներկայացվող տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» N 22-Ն որոշում

3) ՀՀ կառավարության 2007 թվականի հունվարի 11-ի «Գարեջրի և դրա արտադրության վերաբերյալ տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» N 44-Ն որոշում

4) ՀՀ կառավարության 2006 թվականի դեկտեմբերի 21-ի «Կաթին, կաթնամթերքին և դրանց արտադրությանը ներկայացնող պահանջների տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» N 1925-Ն որոշում

5) ՀՀ կառավարության 2009 թվականի հունիսի 26-ի «Հյութերին և հյութամթերքներին ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» N 744-Ն որոշում

6) ՀՀ կառավարության 2011 թվականի սեպտեմբերի 29-ի «Ձվի և ձվամթերքի տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» N 1438-Ն որոշում

7) ՀՀ կառավարության 2006 թվականի մայիսի 26-ի «Հայկական կոնյակների և հայկական կոնյակի սպիրտների տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» N 954-Ն որոշում

8) ՀՀ կառավարության 2006 թվականի ապրիլի 30-ի «Շշալցված հանքային ջրերին ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» N491-Ն որոշում

2. «Ստանդարտ Դիալոգ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը տրամադրել նշանակման վկայական և շնորհել նույնականացնող համար՝ Ն-01(N-01)2014:

3. ՀՀ էկոնոմիկայի նախարարի 2013 թվականի սեպտեմբերի 3-ի «Համապատասխանության գնահատման նշանակված մարմինների գրանցամատյանի ձևը և վարման կարգը հաստատելու մասին» N 801-Ա հրամանով սահմանված կարգով «Ստանդարտ Դիալոգ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը գրանցել համապատասխանության գնահատման նշանակված մարմինների գրանցամատյանում:

4. Մերժել «Ստանդարտ Դիալոգ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության օծանելիքագեղարարական արտադրանքի անվտանգության տեխնիկական կանոնակարգով սահմանված պահանջների համապատասխանության գնահատման գործունեություն իրականացնելու նպատակով նշանակվելու համար ներկայացված հայտը՝ Հայաստանի Հանրապետությունում է օծանելիքագեղարարական արտադրանքի նկատմամբ սահմանված տեխնիկական կանոնակարգի բացակայության պատճառով:

5. Ուժը կորցրած ճանաչել ՀՀ էկոնոմիկայի նախարարի 2014 թվականի մարտի 24-ի ««Ստանդարտ Դիալոգ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը մի շարք տեխնիկական կանոնակարգերի պահանջներին համապատասխանության գնահատման գործունեություն իրականացող մարմին նշանակելու և նշանակումը մերժելու մասին» թիվ 256-Ա հրամանը:

6. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ Գ. Բաղալյանին:

ՎԱՀՐԱՄ ԱՎԱՆԵՍՅԱՆ